

13612



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 10 » 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 270 - 24

Նախաձեռնող՝

«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ
Ք. Երևան, Հայաբյան. փ. 11 36 փ.

Գործունեությունը՝

Արարափ համայնքի Պարույր Սևակ
բնակավայրում կրթահամալիրի կառուցում
Արարափի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 270 - 24

« 10 » սեպտեմբերի 2024թ.

Արարարի մարզի Արարար համայնքի Պարույր Սևակ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Պարույր Սևակ բնակավայր

Ներածական մաս. «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ -ի կողմից փորձաքննության ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Պարույր Սևակ բնակավայրում 11 փողոց, 8 հողամաս հասցեում կրթահամալիր կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ հողամաս, գտնվում է գործող դպրոցից 148 մ, ամենամոտ բնակելի տնից 174 մ հեռավորության վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքում ստորգետնյա ջրերը մինչև 8 մետր խորությամբ չեն բացահայտվել:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 16384, 10 մ²,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 4608,90 մ²,
- բարեկարգման ընդհանուր մակերեսը՝ 5548,20 մ²,
- կանաչապատման ընդհանուր մակերեսը՝ 6227,0 մ²:

Համաձայն նախագծի՝ կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք հարկավայրով մասնաշենք՝ 144 աշակերտի համար նախատեսված երկհարկանի դպրոց և մեկ հարկանի



մանկապարտեզ 40 սանի համար: Դպրոցը նախատեսված է 1-ինից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպման նպատակով: Նախագծով նախատեսված են դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց, 144 նստատեղով նախատեսված դահլիճ: Դասասենյակները կահավորված են լինելու անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Դպրոցն ապահովված է լինելու բժշկի կաբինետով՝ կահավորված անհրաժեշտ բժշկական կահույքով: Դպրոցի նկուղն ունենալու է 21.6x20.4 մ չափեր, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն և պոմպարան: Նկուղային հարկն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց:

Մանկապարտեզը նախատեսված է 40 տեղանոց 2 խմբի համար: Խմբերը համալրված են լինելու հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակ:

Համաձայն նախագծի կրթահամալիրի վերգետնյա հարկերի ջեռուցման համար նախատեսված է ավտոմատացված ջրային երկու էլեկտրակաթսա՝ յուրաքանչյուրը 200 կՎտ հզորությամբ, իսկ նկուղային հարկի ջեռուցման համար՝ էլեկտրական յուղային ռադիատորներ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ կրթահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, նախատեսված է հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգույց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Կրթահամալիրի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Կրթահամալիրի հարավ արևմտյան մասում նախատեսվում է տեղադրել 110.2 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 190 հատ 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները:

Նանախեսվող գործունեության տարածքը գտնվում է գործող դպրոցի հարևանությամբ, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման գծերը, անհրաժեշտ միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 624 օր, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ասֆալտ, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական



նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցներ անիվների վրացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (44 մարդ), ինչը կազմում է 176.3 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 4500 մ³, անիվների վրացման համար ջրի ծախսը կկազմի 420 մ³: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5636.3մ³/շին.ժամ:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքների ընթացքում կատարվելու է մոտ 26113 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 7800 մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած 18313 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից տրամադրված վայր:

Շինարարության ընթացքում խմելու անհրաժեշտ ջրի քանակը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով: Անիվների վրացման, ջրցանի, անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել բնակավայրում գտնվող համայնքային աղբյուրից:

Շինարարական աշխատանքների իրականացման փուլում կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Մոտ 9 մ³ ծավալով կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության ընթացքում գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 350 մ³: Վերջիններիս, ինչպես նաև ավելացած հողային հանույթի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Կենցաղային աղբը մոտ 120 մ³ ծավալով կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Կանաչապատման համար անհրաժեշտ քանակի սևահողը բերվելու է ՀՀ օրենքով սահմանված կարգին համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքից 13 կմ հեռավորության վրա գտնվող Ուրցալանջ բնակավայրից, քանի որ հողի վերին շերտը իրենից ներկայացնում է 0.6-0.8 մմ հզորությամբ կավաավազ - խճային խաղնուրդ:

Կանաչապատումն իրականացվելու և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով՝ համաձայն Արարատի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների,



հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝

Արարատի մարզի Պարոյր Սևակ բնակավայրում կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արարատի մարզպետարանը, Արարատի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արարատի մարզի Պարոյր Սևակ բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել



լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում կրթահամալիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան